ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2014թ. թիվ 184-Ա

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 2013 թվականի նոյեմբերի 15-ի թիվ 1032-Ա հրամանը և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարի 23.04.2014թ. N 1/17.4/3374-14 գրությամբ տրված համաձայնությունը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել՝

1) Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N 1-ի.
2) ՀԱԷԿ-ի միջուկային և (կամ) ճառագայթային վթարի դեպքում Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N 2-ի.
3) ՈՒժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ Լոռու մարզի գործողությունների պլանը /հավելված N 3/: Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919 որոշման, կազմվել և հաստատվել է ՀՀ Լոռու մարզպետի 2014 թվականի ապրիլի 17-ի թիվ 145-Ա որոշմամբ.
4) «Վանաձորի քիմպրոմ» ՓԲԸ Վանաձորի քիմիական կոմբինատի վթարի դեպքում ՀՀ Լոռու մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N 4-ի.
5) Մեծավանի ջրամբարի պատվարի փլուզման սպառնալիքի և փլուզման դեպքում ՀՀ Լոռու մարզի բնակչության պաշտպանության պլանը՝ համաձայն հավելված N 5-ի.
6) Խոշոր հիդեհապայթյունավտանգ օբյեկտների վթարի դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլանը՝ համաձայն հավելված N 6-ի.

7) Գարնանային վարարումների, ջրհեղեղների և սելավների դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլանը՝ համաձայն հավելված N 7-ի.
8) Ձնաբքի ժամանակ ՀՀ Լոռու մարզի գործելու պլանը՝ համաձայն հավելված N 8-ի.
9) Խոշոր անտառային հրդեհների առաջացման դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլանը՝ համաձայն հավելված N 9-ի.
10) Խոշոր քարաթափումների և սողանքների առաջացման դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլանը՝ համաձայն հավելված N 10-ի.
11) Կոմունալ-էներգետիկ ցանցերում խոշոր վթարի դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլանը (ջուր, գազ, կապ, տրանսպորտ, էլեկտրաենթակայան և այլն)՝ համաձայն հավելված N 11-ի.
12) Պոչամբարների վթարի դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլանը՝ համաձայն հավելված N 12-ի.
13) Համաճարակների դեպքում ՀՀ Լոռու մարզի գործելու պլանը՝ համաձայն հավելված N 13-ի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 3-ի «ՀՀ Լոռու մարզի տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում գործողությունների պլանը հաստատելու մասին» թիվ 196-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2014թ. մայիսի 27
ք.Վանաձոր